ԷՐԵԲՈՒՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ
МЕДИЦИНСКАЯ АКАДЕМИЯ ЭРЕБУНИ ФОНД
EREBUNI MEDICAL ACADEMY FOUNDATION

EREBUNI
MEDICAL ACADEMY FOUNDATION

Address: Titogradian 133, 0087, Yerevan, RA
Tel: +374(10)47-07-60, +374(99)00-67-67
info@erebuniacademy.am, www.erebuniacademy.am

25

Հաստատում եմ՝

Ռեկտոր Ա. Ա. Իկիլիկյան

« » _____ թ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Երևանի <Էրեբունի> բժշկական Ակադեմիա հիմնադրամի ուսանողական խորհուրդը ուսանողության ինքնակառավարման ներկայացուցչական մարմին է:

1.2. Ուսանողական խորհուրդը պաշտպանում է ուսանողության շահերը, նպաստում է ուսումնառողների կրթական, ֆիզիկական, բարոյական և հոգևոր զարգացմանը:

1.3. Խորհրդի լիազորությունները և գործունեության կարգը՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան սահմանվում է սույն կանոնակարգով:

1.4. Խորհրդի որոշումները ներկայացվում են ակադեմիայի ռեկտորին՝ հաստատման համար:

1.5. Ուս. Խորհրդի նախագահը և անդամները ընտրվում են Ակադեմիայի մանկավարժական խորգրդի կողմից

2. Ուսանողական խորհրդի խնդիրները և գործառույթները

2.1. Պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները

2.2. Ապահովել ինքնակառավարման և ինքնավարության սկզբունքները՝ ուշադրության կենտրոնում պահելով կրթական գործունեության վերլուծությունը, մասնագետների պատրաստման գործընթացները, մատուցվող ծառայությունների որակը

2.3. Ապահովել ուսանողների ներգրավվածությունը ՄՈՒՀ-ի կառավարմանը

2.4. Մասնակցել կրթության որակի բարելավմանն ուղղված իրականացվող միջոցառումներին և արդյունքների վերլուծությանը

2.5. Բարձրաձայնել ուսումնական գործունեությանն առնչվող հարցեր ՄՈՒՀ-ի ղեկավարության, պրոֆեսորադասախոսական կազմի և սովորողների շրջանում:

3. Ուսանողական խորհրդի կառուցվածքը և աշխատանքը

3.1. Ուսանողական խորհուրդը ունի նախագահ և անդամներ:

3.2. Ուսանողական խորհրդի անդամներն են բոլոր մասնագիտությունների, բոլոր կուրսերի ավագները, ինչպես նաև ուսանողներ

3.3. Ուսանողական խորհիդի նաախագահը և որոշ անդամներ պարտադիր պետք է մասնակցեն ՄՈՒՀ-ի մանկավարժական խորհրդի նիստերին

3.4. Ուսանողական խորհուրդը գումարվում է տարեկան առնվազն 4 անգամ , անհրաժեշտության դեպքում նաև արտահերթ

3.5. Ուսանողական խորհուրդը ընդունում է որոշումներ, ներկայացնում հաշվետվություններ ՄՈՒՀ-ի ռեկտորատին

3.6. Ուսանողական խորհուրդը արձագանքում է ուսումնառողների կողմից ստացված դիմումներին, բողոքներին, նամակներին և իրականացնում վերլուծություն

3.7. Ուսանողական խորհրդի նիստերը վավեր են անդամների առնվազն 2/3-ի մասնակցության դեպքում

3.8. Ուսանողական խորհրդի նիստերի արձանագրությունները կազմելու նպատակով ընտրվում է խորհրդի քարտուղար

3.9. Ուսանողական խորհրդի որոշումները ընդունվում են խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, իսկ ձայների հավասարության դեպքում որոշիչ է ուսանողական խորհրդի նախագահի ձայնը

3.10. Ուսանողական խորհրդի նախագահը ընտրվում է անդամների կողմից՝ երկու տարի ժամկետով, փակ, գաղտնի քվեարկությամբ:

3.11. Ուսանողական խորհրդի նիստերին կարող են մասնակցել դասախոսներ և ուսումնառողներ:

3.12. Ուսանողական խորհրդի գործունեությունը դադարեցվում է ՄՈՒՀ-ի ներքին իրավական ակտերի հիման վրա, ինչպես նաև խորհրդի անդամների 2/3-ի որոշմամբ